



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

1998 թվականի ՀՈՒԼԻՍԻ 17-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՀՌՈՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

24 մարտի 2023 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի (զեկուցող), Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ Ե. Կիրակոսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի, 40-րդ հոդվածի 1-ին մասի և 74-րդ հոդվածի,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «1998 թվականի հուլիսի 17-ին ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի Հոռմի կանոնադրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունը 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2097-Ա որոշմամբ հավանություն է տվել «1998 թվականի հուլիսի 17-ին ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը վավերացնելու և կանոնադրության 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Միջազգային քրեական դատարանի իրավազորությունը հետադարձորեն ճանաչելու մասին հայտարարություն ընդունելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2023 թվականի հունվարի 3-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը (անգլերեն բնօրինակն ու հայերեն պաշտոնական թարգմանությունը) և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. Ստուգման ենթակա միջազգային պայմանագրերը

1998 թվականի հուլիսի 17-ին ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը (այսուհետ նաև՝ Կանոնադրություն) ընդունվել է 1998 թվականի հուլիսի 17-ին Հռոմում՝ Միջազգային քրեական դատարանի հիմնադրման նպատակով ձևավորված՝ Միավորված ազգերի կազմակերպության Լիազոր ներկայացուցիչների դիվանագիտական կոնֆերանսում և ուժի մեջ է մտել 2002 թվականի հուլիսի 1-ից:

1.1. Հայաստանի Հանրապետությունը Կանոնադրությունն ստորագրել է 1999 թվականի հոկտեմբերի 1-ին՝ հայտարարությամբ, համաձայն որի՝

«Միջազգային քրեական դատարանի կանոնադրության հոդված 124-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ Հայաստանի Հանրապետության համար Կանոնադրության ուժի մեջ



մտնելուց հետո յոթ տարվա ընթացքում չի ընդունում Դատարանի իրավագործությունը 8-րդ հոդվածում նշված հանցագործությունների կատեգորիաների նկատմամբ, երբ, ինչպես ենթադրվում է, հանցագործությունը կատարվել է իր քաղաքացիների կողմից կամ իր տարածքում:

Միջազգային քրեական դատարանի կանոնադրության 103-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ Հայաստանի Հանրապետությունը պատրաստ է ընդունել Դատարանի կողմից դատապարտված անձանց, եթե նրանք ՀՀ քաղաքացիներ կամ ՀՀ-ում մշտական բնակություն հաստատած անձինք են»:

1.2. Կառավարությունը 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2097-Ա որոշմամբ հավանություն է տվել Կանոնադրությունը վավերացնելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ օրենսդրական նախաձեռնությանը՝ սույն գործի շրջանակում 2023 թվականի մարտի 17-ին Սահմանադրական դատարանին տեղեկացնելով 1999 թվականի հոկտեմբերի 1-ի՝ նախորդ կետում նշված հայտարարությունը կատարելու մտադրության բացակայության մասին:

1.3. Կառավարության նույն որոշմամբ հավանության արժանացած օրենքի նախագծի համաձայն՝ նախատեսվում է ընդունել Հայաստանի Հանրապետության կողմից Միջազգային քրեական դատարանի իրավագործությունը հետադարձորեն ճանաչելու մասին հայտարարություն, համաձայն որի՝ «Հայաստանի Հանրապետությունը հետադարձորեն ճանաչում է 1998 թվականի հուլիսի 17-ին ստորագրված՝ «Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության» 12-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով Միջազգային քրեական դատարանի իրավագործությունը «Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության» 6-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածներով նախատեսված՝ ցեղասպանության, մարդկության դեմ ուղղված և պատերազմական հանցագործությունների նկատմամբ՝ 2021 թվականի մայիսի 10-ի ժամը 00:00-ից ի վեր»:

1.4. Կանոնադրությունում մինչ օրս կատարվել են հետևյալ փոփոխություն-



ա) 2010 թվականի հունիսի 10-ին (8-րդ հոդվածի 2-րդ մասի «ե» կետը լրացվել է xiii, xiv, xv ենթակետերով),

բ) 2010 թվականի հունիսի 11-ին (5-րդ հոդվածի 2-րդ մասը հանվել է, 8-րդ հոդվածից հետո ավելացվել է 8bis հոդվածը, 9-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է՝ դրանում 8bis հոդվածին հղում ավելացնելով, 15-րդ հոդվածից հետո ավելացվել են 15bis և 15ter հոդվածները, 20-րդ հոդվածի 2-րդ մասը լրացվել է՝ դրանում 8bis հոդվածին հղում ավելացնելով, 25-րդ հոդվածը լրացվել է 3bis մասով),

գ) 2015 թվականի նոյեմբերի 26-ի փոփոխությամբ 124-րդ հոդվածը հանվել է (փոփոխությունը դեռ ուժի մեջ չի մտել),

դ) 2017 թվականի դեկտեմբերի 14-ին (8-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» ենթակետը լրացվել է xxvii ենթակետով, իսկ 8-րդ հոդվածի 2-րդ կետի «ե» կետը լրացվել է xvi ենթակետով),

ե) 2017 թվականի դեկտեմբերի 14-ին (8-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը լրացվել է xxviii ենթակետով և 8-րդ հոդվածի 2-րդ մասի «ե» կետը՝ xvii ենթակետով),

զ) 2017 թվականի դեկտեմբերի 14-ին (8-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը լրացվել է xxix ենթակետով և 8-րդ հոդվածի 2-րդ մասի «ե» կետը՝ xviii ենթակետով),

է) 2019 թվականի դեկտեմբերի 6-ին (8-րդ հոդվածի 2-րդ մասի «ե» կետը լրացվել է xix ենթակետով):

1.5. Հայաստանի Հանրապետությունը Կանոնադրությունում կատարված որևէ փոփոխության չի միացել:

1.6. Այսպիսով, Կառավարությունը Սահմանադրական դատարան է դիմել առանց փոփոխությունների Կանոնադրությամբ և Կանոնադրության 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Միջազգային քրեական դատարանի իրավազորությունը հետադարձորեն ճանաչելու մասին հայտարարությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար:



2. Սահմանադրական դատարանի 2004 թվականի օգոստոսի 13-ի ՍԴՈ-502 որոշումը

2.1. 2004 թվականի հուլիսի 12-ին, ղեկավարվելով 1995 թվականի Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հանրապետության Նախագահը դիմել էր Սահմանադրական դատարան՝ Կանոնադրությունում (կից հայտարարությամբ) ամրագրված պարտավորությունների՝ 1995 թվականի Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցով: Սահմանադրական դատարանը 2004 թվականի օգոստոսի 13-ին «1998 թվականի հուլիսի 17-ին Հռոմում ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի կանոնադրության մասին համաձայնագրում (կից հայտարարությամբ) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով կայացրել է ՍԴՈ-502 որոշումը, որի համաձայն՝

«1. 1998թ. հուլիսի 17-ին Հռոմում ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի կանոնադրության մասին համաձայնագրում (կից հայտարարությամբ) ամրագրված այն պարտավորությունը, ըստ որի Միջազգային քրեական դատարանը լրացնում է ՀՀ ներպետական քրեական իրավազրության մարմինները (Կանոնադրության նախաբանի 10-րդ մաս և 1-ին հոդված), չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91 և 92 հոդվածներին:

2. Միջազգային քրեական դատարանի կանոնադրության 105 հոդվածի դրույթներով ստանձնած պարտավորությունները, որոնցով բացառվում է դատապարտված անձանց ներպետական ընթացակարգով ներման իրավունքի և համաներման հնարավորության իրացումը, չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 40 հոդվածի, 55 հոդվածի 17 կետի, 81 հոդվածի 1-ին կետի պահանջներին»:

2. Սահմանադրական դատարանը ՍԴՈ-502 որոշման պատճառաբանամամբում, մասնավորապես, նշել էր.



«(...)

Կանոնադրությունն ամրագրում է Դատարանի իրավազորության հիմքում ընկած հիմնական սկզբունքը, այն է՝ Դատարանը, իրավազորություն իրականացնելով Կանոնադրությամբ նախատեսված ծանր հանցագործությունների կատարման համար պատասխանատու անձանց նկատմամբ, լրացնում է ներպետական իրավազորության մարմինները: Դատարանի իրավազորության հիմքում ընկած այս սկզբունքի բովանդակությունը, մասնավորապես, բացահայտված է Կանոնադրության 17 հոդվածում, որի համաձայն՝ Դատարանն իրավասու է Կանոնադրությամբ նախատեսված հանցագործությունների նկատմամբ արդարադատություն իրականացնել միայն այն դեպքում, երբ տվյալ պետությունն ի վիճակի չէ կամ չի ցանկանում Կանոնադրությամբ նախատեսված հանցագործությունների առնչությամբ պատշաճ կերպով իրականացնել քննություն կամ քրեական հետապնդում: Նույն հոդվածը նաև հստակորեն սահմանում է այն գործոնները, որոնք օբյեկտիվ հիմք են հանդիսանում յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետության կողմից քննություն կամ քրեական հետապնդում իրականացնելու ցանկության բացակայությունը միջազգային իրավունքով ճանաչված համապատասխան ընթացակարգային նորմերին համապատասխան գնահատելու համար: Կանոնադրության 17 հոդվածի 3-րդ կետը սահմանում է նաև յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետության՝ քննություն կամ քրեական հետապնդում իրականացնելու անկարողության առկայության գնահատման օբյեկտիվ հիմքերը: Բացի դրանից, Կանոնադրության 19 հոդվածը տվյալ գործի նկատմամբ իրավազորություն ունեցող պետությանը հնարավորություն է տալիս վիճարկել գործի ընդունելիությունը և Դատարանի իրավազորությունն այն հիմքով, որ այդ պետությունը գործով քննություն կամ քրեական հետապնդում է իրականացնում կամ իրականացրել է: Դատարանի՝ ներպետական քրեական իրավազորության մարմիններին լրացնող բնույթը դրսևորվում է նաև նրանում, որ Կանոնադրությունը նախատեսում է նաև կոնկրետ անձանց նկատմամբ քննությունը Դատախազի կողմից իրավասու պետությանը փոխանցելու հնարավորություն, երբ այդ պետությունը Կանոնադրությամբ սահմանված



ժամկետում Դատարանին տեղեկացնում է, որ ինքը քննություն է իրականացնում կամ իրականացրել է այդ անձանց նկատմամբ:

Այսուհանդերձ, Կանոնադրության նախաբանի 10-րդ մասով և հոդված 1-ով նախատեսված՝ ներպետական քրեական իրավագործության մարմինների լրացման դրույթը չի բխում ՀՀ Սահմանադրության 91 և 92 հոդվածներով ամրագրված նորմերից: Արդարադատության իրականացումը հանդիսանում է դատարանների բացառիկ իրավասությունը: Ներպետական դատական համակարգի առնչությամբ ՀՀ Սահմանադրության 91 հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատություն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Սահմանադրության 92 հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության, այդ թվում նաև քրեական իրավագործություն իրականացնող դատարաններն են առաջին ատյանի դատարանները, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը:

ՀՀ Սահմանադրության՝ դատական իշխանությանը վերաբերող 9-րդ գլուխը, հստակորեն սահմանելով ՀՀ դատական իշխանության համակարգը, չի նախատեսում որևէ դրույթ, որը հնարավորություն կտար միջազգային պայմանագրով լրացնել ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված՝ քրեական իրավագործություն իրականացնող դատական մարմինների համակարգը՝ քրեական իրավագործության միջազգային դատական մարմնով:

15. Պետության ինքնիշխանության սկզբունքի և Դատարանի իրավագործության փոխհարաբերության հիմնախնդրին են առնչվում նաև Կանոնադրության 54 հոդվածի 2-րդ կետի, 57 հոդվածի 3-րդ կետի /դ/ ենթակետի և 99 հոդվածի 4-րդ կետի դրույթները: Այս դրույթները հնարավորություն են ընձեռում Դատախազին համապատասխան մասնակից պետության տարածքում անմիջականորեն իրականացնել առանձին քննչական գործողություններ՝ առանց այդ պետության կողմից համագործակցության համաձայնություն ստանալու կամ առանց այդ պետության իշխանությունների ներ-



պետության:

Կանոնադրության նշված դրույթները և 54, 57 և 99 հոդվածների այլ դրույթներ, Դատախազին տրամադրելով բավականին լայն լիազորություններ, միաժամանակ նախատեսում են մի շարք երաշխիքներ, որոնք հաշվի են առնում պետության ինքնիշխանությունը և թույլ չեն տա Դատախազին չարաշահել իր իրավասությունը:

(...)

Այսպիսով, Կանոնադրության 54 հոդվածի 2-րդ կետը, 57 հոդվածի 3-րդ կետի /դ/ ենթակետը և 99 հոդվածի 4-րդ կետն ածանցյալ են Դատարանի գործունեության հիմքում ընկած փոխլրացնելիության սկզբունքից և, մեկնաբանվելով այդ սկզբունքի՝ Սահմանադրությամբ ամրագրված լինելու համատեքստում, չեն կարող վտանգել մասնակից պետության ինքնիշխանությունը:

(...)

Կանոնադրության 105 հոդվածի համաձայն՝ ազատագրկման ձևով պատժի նշանակման վերաբերյալ Դատարանի դատավճիռը պարտադիր է մասնակից պետությունների համար, որոնք ոչ մի դեպքում չեն կարող փոփոխել այն: Այս դրույթը ենթադրում է, որ Կանոնադրության 5 հոդվածում նախատեսված հանցագործությունների համար Դատարանի կողմից դատապարտված՝ Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավազորության ներքո գտնվող անձինք չեն կարող օգտվել ներում ստանալու, ինչպես նաև իրենց նկատմամբ համաներման կիրառման միջոցով պատժի կրումից ազատվելու կամ ազատագրկման ժամկետի կրճատման հնարավորությունից, և, համապատասխանաբար՝ ՀՀ Նախագահը չի կարող այդ անձանց առնչությամբ իրացնել ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի 17 կետով նախատեսված՝ դատապարտյալներին ներում շնորհելու իրավունքը, իսկ ՀՀ Ազգային ժողովը՝ ՀՀ Սահմանադրության 81 հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ համաներում հայտարարելու իրավունքը:

Այն դեպքում, երբ Կանոնադրության 5 հոդվածում նախատեսված հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ քրեական իրավապետություն իրականացնում են ՀՀ ներպետական դատարանները, վերհանձնելու կողմից ազատագրկման դատապարտված անձինք կարող են օգտվել ներում հայցելու հնարավորությունից և համաներման միջոցով պատժի կրումից



ազատվելու կամ ազատագրվման ժամկետի կրճատման հնարավորությունից: Մինչդեռ, նույն հանցագործությունների համար Դատարանի՝ որպես ներպետական քրեական իրավագործության համակարգը լրացնող մարմնի, կողմից դատապարտված՝ ՀՀ ընդհանուր իրավագործության ներքո գտնվող անձինք Կանոնադրության 105 հոդվածի պահանջներին համապատասխան զրկվում են ՀՀ Սահմանադրության 40 հոդվածով նախատեսված ներման իրավունքից, ինչպես նաև 81 հոդվածով ամրագրված համաներման հնարավորությունից:

Հայաստանի Հանրապետությունը, ի կատարումն ՀՀ Սահմանադրության 4 հոդվածով ստանձնած՝ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիքների, չի կարող ստանձնել Սահմանադրությամբ չնախատեսված՝ մարդու իրավունքների սահմանափակման այնպիսի պարտավորություններ, որոնք նվազ բարենպաստ վիճակ կստեղծեն ՀՀ իրավագործության ներքո գտնվող անձանց համար՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված իրավունքների և ազատությունների երաշխավորման առումով»:

2.3. Սահմանադրական դատարանը նկատում է, որ ՍԴՌ-502 որոշմամբ ստուգման են ենթարկվել Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունները, և Կանոնադրության ու Կանոնադրության՝ 2004 թվականի օգոստոսի 13-ի ՍԴՌ-502 որոշմամբ նշված անվանումների միջև առկա է տարբերություն: Սակայն հաշվի առնելով, որ նշված տարբերության պատճառը Կանոնադրության՝ 2004 թվականի (ըստ որի՝ Կանոնադրությունը նշված է՝ «1998թ. հուլիսի 17-ին Հռոմում ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի կանոնադրության մասին համաձայնագիր») և 2023 թվականի հայերեն թարգմանության պաշտոնական տեքստերի միջև եղած տարբերությունն է, հիշյալ անհամապատասխանությունը սույն քննության նպատակների համար իրավական տարբերություն չի ստեղծում:

3. Կառավարության դիրքորոշումը

3.1. Կառավարությունը 2023 թվականի փետրվարի 3-ի գրավոր դիրքորոշման հայտնել է, որ Կանոնադրության նպատակն է դրանում նշված առավել ծանր գեղեցիկություններ կատարած անձանց անպատժելիությունը բացառելու և



դրանով իսկ այդպիսի հանցագործությունների կանխմանը նպաստելու համար ներպետական քրեական իրավազորության մարմիններին լրացնող Միջազգային քրեական դատարանի հիմնադրումը, որին ընդդատյա են ցեղասպանության, մարդկության դեմ ուղղված և պատերազմական հանցագործությունները՝ ներկայացնելով նաև դրա կողմից իր իրավազորությունն իրականացնելու առիթների և նախապայմանների վերաբերյալ Կանոնադրության դրույթները:

Կառավարությունը նշել է, որ Կանոնադրության՝ Սահմանադրական դատարան ներկայացված տեքստը 1998 թվականի հուլիսի 17-ին ստորագրված փաստաթղթի սկզբնական տարբերակն է, և Կանոնադրության դրույթների սահմանադրականության գնահատման համար դիմել է Սահմանադրական դատարան՝ հիմք ընդունելով դրա՝ 1998 թվականի հուլիսի 17-ին ստորագրված սկզբնական տեքստը, որն էլ, անցնելով Սահմանադրությամբ և «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքով նախատեսված անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը, և Սահմանադրությանը համապատասխանող ճանաչվելու դեպքում ներկայացվելու է Ազգային ժողովի վավերացմանը:

Ըստ Կառավարության՝ Սահմանադրական դատարանի 2004 թվականի որոշումից հետո Հայաստանի Հանրապետությունում տեղի են ունեցել Սահմանադրության փոփոխություններ, որոնց արդյունքում Սահմանադրությունը ենթարկվել է հիմնարար փոփոխությունների: Նշվում է, որ վերջին տասնամյակի ընթացքում տեղի ունեցած իրավական և հասարակական զարգացումները հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ «(...) 2004թ. որոշմամբ Սահմանադրական դատարանի ամրագրված իրավական խոչընդոտները ներկայումս վերացել են, և ըստ այդմ, անհրաժեշտություն է առաջանում վերանայել Կանոնադրության սահմանադրականության հարցը 2015թ. խմբագրությամբ գործող Սահմանադրության լույսի ներքո»:



Մեղրադառնալով Միջազգային քրեական դատարանի իրավազորությանը՝ Կառավարությունը նշում է, որ դրա հիմքում ընկած է կոմպլեմենտարության (հավելյալ) սկզբունքը, համաձայն որի՝ Միջազգային քրեական դատարանը

հանդես է գալիս որպես ածանցյալ օղակ և միջամտում է Կանոնադրությամբ սահմանված առանձնապես ծանր հանցագործությունների հիմքով քրեական գործերի քննությանը բացառապես որոշակի պայմանների առկայության պարագայում: Կառավարությունը գտնում է, որ հիշյալ սկզբունքը բխում է պետության ներքին ինքնիշխանության, իր իրավասու մարմինների նկատմամբ հարգանքի և դրանց իրավազորության առաջնահերթության անհրաժեշտությունից՝ հաշվի առնելով, ի թիվս այլնի, այն հանգամանքը, որ այդ մարմինները, տիրապետելով ապացուցողական բազային և ունենալով համապատասխան ռեսուրսներ, առավել արդյունավետ կարող են իրականացնել գործի քննությունը:

Կառավարությունը նշում է, որ Միջազգային քրեական դատարանը ներգրավվում և իրականացնում է իր գործառույթները միայն այն պարագայում, երբ պետության ազգային իրավական համակարգը չի ապահովում գործի պատշաճ քննությունը, այդ թվում՝ երբ իրականացվող քննությունը ձևական բնույթ է կրում, և պետությունը չի ցանկանում կամ չի կարող ապահովել նման պատշաճ քննությունը: Ներկայացվում է, որ կոմպլեմենտարության սկզբունքի նպատակն է պահպանել Միջազգային քրեական դատարանի իրավազորությունը ոչ պատասխանատու պետությունների նկատմամբ, որոնք հրաժարվում են քրեական պատասխանատվության ենթարկել ծանրագույն միջազգային հանցագործություններ կատարողներին: Այն հակակշռում է վերազգային իրավազորությունը՝ մի կողմից, և պետությունների՝ առանց արտաքին միջամտության սեփական քաղաքացիներին պատասխանատվության ենթարկելու ինքնիշխան իրավունքները՝ մյուս կողմից:

Կառավարությունը նշում է, որ ցեղասպանության, մարդկության դեմ ուղղված, պատերազմական և ագրեսիայի հանցագործություններն ընդհանուր միջազգային իրավունքի *jus cogens* նորմերով արգելված են: Նշվում է, որ այդ հանցագործությունների արգելքին, կանխարգելմանը և դրանց համար պատասխանատվությանը վերաբերող միջազգային իրավունքի իմպերատիվ նորմերը պետությունների համար ստեղծում են անվերապահ պարտավորություններ, որոնք կարող են ողջ միջազգային հանրությանը (*erga omnes*), և պետությունները



պարտավոր են միջազգային հարաբերությունների բոլոր մակարդակներում ղեկավարվել իմպերատիվ նորմերով, թույլ չտալ դրանց խախտումը, իսկ խախտման փաստի առկայության դեպքում՝ բարեխղճորեն պատասխանատվության ենթարկել դրանք կատարած անձանց:

Կառավարությունը գտնում է, որ Միջազգային քրեական դատարանը հիմնադրվել է՝ *jus cogens* նորմերի կատարումն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, և կոմպլեմենտարության սկզբունքի առաջնային իմաստն այն է, որ Միջազգային քրեական դատարանը միջամտում է միայն այն պարագայում, երբ պետությունը չի ցանկանում կամ ի վիճակի չէ քրեական հետապնդում իրականացնել և պատասխանատվության ենթարկել խնդրո առարկա հանցագործությունները կատարած ֆիզիկական անձանց՝ ի խախտումն *jus cogens* նորմի հիման վրա ծագած *erga omnes* պարտավորության: Կանոնադրությամբ նախատեսված հանցագործությունների համար քրեական հետապնդում իրականացնելու և քրեական պատասխանատվության ենթարկելու միջազգային պարտավորությունը հիմնված է ոչ միայն *jus cogens* նորմերի վրա, այլ նաև ուղղակիորեն բխում է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային մի շարք պայմանագրերից:

Կառավարությունը կարծում է, որ «(...) կոմպլեմենտարության սահմանադրականության հարցը քննարկելիս անհրաժեշտ է հենց այս ելակետից մոտենալ, քանի որ ՀՀ Սահմանադրությունը չի կարող մեկնաբանվել միջազգային իրավունքից կտրված՝ վակուումի մեջ, հատկապես, երբ խոսքը գնում է ընդհանուր միջազգային իրավունքի իմպերատիվ (*jus cogens*) նորմերի մասին»:

Կառավարությունը եզրակացնում է, որ Սահմանադրության՝ դատական իշխանության մարմինների համակարգը սահմանող դրույթները (1995 թվականի Սահմանադրության 91 և 92-րդ հոդվածներ, 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 162 և 163-րդ հոդվածներ) որևէ կերպ չեն բացառում միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանների Հայաստանի Հանրապետության կողմից դրան միանալը և այդ



դատարանների իրավագործության իրականացումը: Ըստ Կառավարության՝ Միջազգային քրեական դատարանը չի փոխարինում Հայաստանի Հանրապետության ներպետական դատական մարմիններին, այլ լրացնում է դրանք, ընդ որում՝ միայն այն պարագայում, երբ պետությունը, ի դեմս իր դատաիրավական համակարգի, խուսափում է իր միջազգային լրջագույն պարտավորությունների կատարումից:

Կառավարությունը, ներկայացնելով 1995 թվականի Սահմանադրության 40-րդ հոդվածը, 55-րդ հոդվածի 17-րդ կետը, 81-րդ հոդվածի 1-ին կետը, ինչպես նաև 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության՝ նույն հարցերը կարգավորող 70, 117 և 135-րդ հոդվածները, նշում է, որ դրանք համադրելու արդյունքում կարելի է արձանագրել, որ ներման և համաներման ինստիտուտներին վերաբերող դրույթները չունեն միևնույն բովանդակությունը և ենթարկվել են որակական փոփոխությունների:

Կառավարությունը նշում է, որ ներման և համաներման հարցերին վերաբերող՝ 1995 թվականի Սահմանադրության 40-րդ հոդվածը, 55-րդ հոդվածի 17-րդ կետը, 81-րդ հոդվածի 1-ին կետի և 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 70, 117 և 135-րդ հոդվածների համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ Սահմանադրությամբ ներման և համաներման ինստիտուտների կարգավորումը ներկայումս վերապահվում է օրենքին, իսկ առավել ծանր միջազգային հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ ներում կամ համաներում կիրառելն ինքնին հակասում է ընդհանուր միջազգային իրավունքի *jus cogens* նորմերին, և որ այդպիսի արգելքն իր արտացոլումն է գտել նաև 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 91-րդ և 92-րդ հոդվածներում:

3.2. Ի պատասխան Սահմանադրական դատարանի՝ սույն գործով զեկուցող դատավորի հարցման՝ Կառավարության ներկայացուցիչը, 2023 թվականի մարտի 17-ին Սահմանադրական դատարան ներկայացրած գրությամբ անդրադառնալով ներկայացրած հարցերին ստորագրելիս Հայաստանի Հանրապետության՝ սույն որոշման հարցում նշված հայտարարության հարցում Կառավարության մտադրությանը,



նշել է. «ՀՀ կառավարությունը չունի Կանոնադրության վերոնշյալ հոդվածներով հայտարարություն կատարելու մտադրություն»:

4. Կանոնադրությամբ ստանձնվող պարտավորությունները

Անդրադառնալով Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների սահմանադրականության ըստ էության ստուգման հարցին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Կանոնադրությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, ի թիվս այլնի, հետևյալ պարտավորությունները.

ա) ճանաչել Միջազգային քրեական դատարանի՝ որպես քրեական իրավազորության ազգային համակարգերը լրացնող ատյանի իրավազորությունը՝ միջազգային հանրության մտահոգությունը հարուցող և Կանոնադրության 5-րդ հոդվածով թվարկված հանցագործությունները կատարած անձանց նկատմամբ (հոդված 1՝ համակցված 12-րդ հոդվածի 1-ին մասի և 5-րդ հոդվածի 2-րդ մասի հետ).

բ) ճանաչել Միջազգային քրեական դատարանի՝ Կանոնադրությամբ նախատեսված կարգով իր գործառույթներն ու լիազորությունները Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնելու իրավասությունը (հոդված 4, մաս 2).

գ) չդատել անձին Կանոնադրության 5-րդ հոդվածում նշված հանցագործությունների առնչությամբ, որոնց համար Միջազգային քրեական դատարանի կողմից նա արդեն ճանաչվել է մեղավոր կամ արդարացվել է (հոդված 20, մաս 2).

դ) Կանոնադրությունը հավասարապես կիրառել բոլոր անձանց նկատմամբ՝ առանց պաշտոնեական դիրքով պայմանավորված որևէ տարբերակման, ինչպես նաև երաշխավորել, որ ազգային կամ միջազգային իրավունքով նախատեսված անձեռնմխելիությունը կամ դատավարական հատուկ նորմերը, որոնք կարող են կապված լինել անձի պաշտոնեական դիրքի հետ, չխոչընդոտեն Միջազգային քրեական դատարանին՝ այդ անձանց նկատմամբ իրականացնելու իր իրավազորությունը (հոդված 27).

Երաշխավորել Հայաստանի Հանրապետության տարածքում Միջազգային դատարանի այնպիսի արտոնությունները և անձեռնմխելիությունը,



ինչպիսիք անհրաժեշտ են դրա նպատակների իրականացման համար (հոդված 48, մաս 1).

զ) երաշխավորել, որ Միջազգային քրեական դատարանի գործունեությանը մասնակցելու ընթացքում կամ նման գործունեության առնչությամբ Միջազգային քրեական դատարանի դատավորները, դատախազը, դատախազի տեղակալները և քարտուղարն օգտվեն այնպիսի արտոնություններից և անձեռնմխելիությունից, ինչպիսիք տրամադրվում են դիվանագիտական առաքելությունների ղեկավարներին, և որ իրենց կարգավիճակից բխող գործողությունների, արտահայտած կամ գրած խոսքի առնչությամբ նրանց դատավարական ցանկացած տեսակի անձեռնմխելիության տրամադրումը կշարունակվի նրանց լիազորությունների ժամկետը լրանալուց հետո (հոդված 48, մաս 2).

է) անձի նախնական կալանավորման կամ կալանավորման և Միջազգային քրեական դատարանին փոխանցման պահանջն ստանալուց հետո անհապաղ միջոցներ ձեռնարկել նշված անձին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Կանոնադրության 9-րդ մասի դրույթներին համապատասխան կալանավորելու համար, նրան անհապաղ ներկայացնել Հայաստանի Հանրապետության իրավասու դատական մարմնին, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ պարզում է, թե արդյոք՝

- կալանավորման մասին որոշումը տրված է այդ անձի վերաբերյալ,
- այդ անձը կալանավորվել է պատշաճ ընթացակարգին համապատասխան,
- պահպանվել են այդ անձի իրավունքները (հոդված 59, մասեր 1 և 2).

ը) մինչև Միջազգային քրեական դատարանին փոխանցելն իրեն ժամանակավորապես ազատ արձակելու վերաբերյալ կալանավորված անձի կողմից Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններին տրված ցանկացած հավանաբարի մասին տեղեկացնել Միջազգային քրեական դատարանի մինչդատարանային փուլի ընթացքում թի պալատին և մինչ իր որոշումը կայացնելը լիովին հաշվի առնել այդ



կապակցությամբ վերջինիս բոլոր՝ ներառյալ անձի փախուստը կանխելու միջոցների վերաբերյալ հանձնարարականները (հոդված 59, մաս 5).

թ) անձին Միջազգային քրեական դատարանին փոխանցելու մասին իր որոշումը կայացնելուց հետո անհապաղ նրան տեղափոխել Միջազգային քրեական դատարան (հոդված 59, մաս 7).

ժ) ճանաչել Միջազգային քրեական դատարանի իրավազորությունն իր կողմից իրականացվող արդարադատության դեմ ուղղված դիտավորյալ այն հանցագործությունների նկատմամբ, որոնք թվարկված են Կանոնադրության 70-րդ հոդվածի 1-ին մասում և Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից կամ Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված այդպիսի հանցագործությունների վրա տարածել քննության անցկացման և դատավարության դեմ ուղղված հանցագործությունների համար պատիժներ նախատեսող՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությունը (հոդված 70, մաս 1 և մաս 4, կետ «ա»).

ժա) առանց *bona fide* երրորդ կողմի իրավունքները խախտելու և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերին համապատասխան՝ կատարել տուժողներին պատճառված կամ նրանց առնչվող վնասի հատուցման վերաբերյալ, ներառյալ՝ ռեստիտուցիան, փոխհատուցումը և ռեպրիլիտացիան, Միջազգային քրեական դատարանի՝ Կանոնադրության 75-րդ հոդվածի համաձայն ընդունած որոշումը և այդ որոշման կատարման արդյունքում ձեռք բերված գույքը փոխանցել Միջազգային քրեական դատարանին (հոդված 75, մաս 5՝ համակցված 109-րդ հոդվածի հետ).

ժբ) Կանոնադրության դրույթներին համապատասխան՝ բազմակողմանիորեն համագործակցել Միջազգային քրեական դատարանի հետ՝ իրեն ընդդատյա հանցագործությունների կապակցությամբ վերջինիս կողմից իրականացվող քննության և քրեական հետապնդման հարցերում (հոդված 86).

ժգ) որպես հարցվող պետություն հանդես գալու պարագայում պահպանել իր իրավազորության վերաբերյալ Միջազգային քրեական դատարանի դիմումի և



այն հիմնավորող փաստաթղթերի գաղտնիությունը, բացառությամբ այն ծավալով, որքանով դրանց բացահայտումն անհրաժեշտ է դիմումի կատարման համար (հոդված 87, մաս 3).

ժդ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսել Կանոնադրության 9-րդ մասում նշված համագործակցության բոլոր ձևերին վերաբերող ընթացակարգեր (հոդված 88).

ժե) Կանոնադրության 9-րդ մասի դրույթներին և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերին համապատասխան՝ կատարել Միջազգային քրեական դատարանի՝ անձին կալանավորելու և փոխանցելու մասին պահանջը (հոդված 89, մաս 1).

ժզ) Եթե փոխանցման ենթակա անձը Կանոնադրության 20-րդ հոդվածում նշված *ne bis in idem* սկզբունքի հիման վրա վիճարկում է փոխանցումը ներպետական դատարանում, ապա որպես հարցվող Պետություն անհապաղ խորհրդակցել Միջազգային քրեական դատարանի հետ՝ պարզելու, թե կա՞րոյոք գործի ընդունելիության վերաբերյալ համապատասխան որոշում, և եթե գործի ընդունելիությունը ճանաչված է, ապա ընթացք տալ պահանջի կատարմանը (հոդված 89, մաս 2).

ժէ) անհետաձգելի դեպքերում՝ նախքան փոխանցման վերաբերյալ դիմումը և այն հիմնավորող՝ Կանոնադրության 91-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելը, կատարել որոնվող անձին նախնական կալանքի վերցնելու մասին Միջազգային քրեական դատարանի դիմումի պահանջը (հոդված 92, մաս 1՝ համակցված 86-րդ հոդվածի հետ).

ժը) Կանոնադրության 9-րդ բաժնի (մասի) դրույթներին և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ կատարել քննություն կամ քրեական հետապնդում իրականացնելու կապակցությամբ Միջազգային քրեական դատարանին աջակցություն ցույց տալու մասին պահանջները, որոնց ցանկը սահմանված է Կանոնադրության 93-րդ հոդվածի 1-ին մասում (հոդված 93, մաս 1).



ժթ) աջակցել, երբ դա անհրաժեշտ է այն պահանջի արդյունավետ կատարման համար, որը կարող է իրականացվել առանց հարկադրանքի միջոցների, ներառյալ՝ անձի հարցաքննությունը կամ կամավոր հիմունքներով նրանից ապացույցներ ստանալը, այդ թվում՝ առանց հարցվող պետության իշխանությունների ներկայության, եթե դա էապես կարևոր է պահանջի կատարման համար, ինչպես նաև որևէ հանրային օբյեկտի կամ հանրային վայրի զննումը, ճանաչել Կանոնադրության 99-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգով այդ պահանջը Միջազգային քրեական դատարանի դատախազի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում անմիջականորեն կատարելու իրավասությունը (հոդված 99, մաս 4)։

ի) որպես հարցվող Պետություն՝ կրել Հայաստանի Հանրապետության տարածքում դիմումների պահանջների կատարման հետ կապված սովորական ծախսերը, բացառությամբ Կանոնադրության 100-րդ հոդվածի 1-ին մասում նշված ծախսերի (հոդված 100, մաս 1)։

5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության մասին

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործն ունի այն առանձնահատկությունը, որ Սահմանադրությանը համապատասխանության հարցի քննության առարկա հանդիսացող Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների առնչությամբ Սահմանադրական դատարանն արդեն իսկ կայացրել է դրանց՝ 1995 թվականի Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ ՍԴՈ-502 որոշումը։

5.1. Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության ստուգման և 2004 թվականի օգոստոսի 13-ի ՍԴՈ-502 որոշման գործի քննությամբ միջազգային պայմանագրում ամրագրված



պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության ստուգման հանգամանքների միջև առկա է հետևյալ էական տարբերությունը.

ա) սույն գործով Սահմանադրական դատարանի խնդիրն է որոշել Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությանը, մինչդեռ ՍԴՈ-502 որոշմամբ Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների ստուգումն իրականացվել է դրանց՝ 1995 թվականի Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով, և

բ) 2021 թվականի ապրիլի 29-ի ՍԴՈ-1590 որոշմամբ Սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրության նախաբանը որպես Սահմանադրության անփոփոխելի դրույթ ճանաչելը հանգեցրել է Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության ստուգման ընթացքում կիրառելի սահմանադրական դրույթների նոր ընկալման, ինչը Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունն ստուգելու նպատակով Սահմանադրության դրույթները մեկնաբանելու հարցում որոշիչ կարևորություն ունի, և

գ) Հայաստանի Հանրապետությունը Կանոնադրությանը միանում և Կանոնադրության 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հայտարարությունն ընդունում է՝ առանց Կանոնադրության 103-րդ հոդվածին համապատասխան՝ Միջազգային քրեական դատարանի դատապարտած անձանց պատժի կրման նպատակով ընդունելու պատրաստակամության մասին հայտարարություն կատարելու:

5.2. Սույն գործը քննության ընդունելու մասին 2023 թվականի հունվարի 10-ի ՍԴԱՈ-1 աշխատակարգային որոշման մեջ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատճառաբանությունը չներառելը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ Սահմանադրական դատարանը, վերը նշված «ա» և «բ» կետերում նշված էական հանգամանքները հաշվի առնելով, չի համարել Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու



հարցը որպես «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի իմաստով «Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-5-րդ կետերում նշված գործերով ներկայացված որևէ դիմումում առաջադրված հարց»:

Սահմանադրական դատարանը սույն գործի հետագա քննությամբ չի պարզել որևէ հանգամանք, որը 2023 թվականի հունվարի 10-ի ՍԴԱՌ-1 աշխատակարգային որոշման հիմքում ընկած դիրքորոշումից շեղվելու հիմք կձառայեր, և վերահաստատում է իր այն դիրքորոշումը, որ Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի իմաստով չի համարվում «Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-5-րդ կետերում նշված գործերով ներկայացված որևէ դիմումում առաջադրված հարց»:

5.3. Վերը նշվածը հաշվի առնելով և քննելով սույն գործը՝ որպես նախկինում որևէ դիմումով չառաջադրված հարցերին առնչվող գործ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունները համահունչ են Սահմանադրության վերաբերելի դրույթներին և խնդրահարույց չեն Սահմանադրության որևէ դրույթին համապատասխանության տեսանկյունից և համապատասխանում են Սահմանադրությանը:

5.4. Միաժամանակ, Սահմանադրական դատարանը սույն որոշման 6-7-րդ կետերում նշված պատճառներով, այն է՝ ՍԴՌ-502 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների առկայության դեպքում հնարավոր անորոշությունը կանխելու նպատակով, անհրաժեշտ է համարում հատուկ անդրադառնալ Կանոնադրության նախաբանի 10-րդ մասով, 1-ին և 105-րդ հոդվածներով ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցին:



6. Կանոնադրության նախաբանի 10-րդ մասով և 1-ին հոդվածով ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության մասին

Սույն որոշման 5.4-րդ կետում նշված նկատառմամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում առանձին անդրադառնալ Կանոնադրությամբ հռչակված՝ Միջազգային քրեական դատարանի կողմից իր իրավազորության իրականացման հիմքում ընկած լրացման կամ կոմպլեմենտարության սկզբունքի՝ Սահմանադրության նախաբանի, 1-ին և 2-րդ հոդվածներում ամրագրված սկզբունքների և արժեքների լույսի ներքո՝ Սահմանադրության 162-րդ հոդվածի 1-ին մասին և 163-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությանը համապատասխանության հարցին:

6.1. Կանոնադրության նախաբանի 10-րդ մասի համաձայն՝ Կանոնադրության կողմ հանդիսացող պետություններն ընդունել են, որ «Կանոնադրությամբ ստեղծվող Միջազգային քրեական դատարանը լրացնում է քրեական իրավազորության ազգային համակարգերը»:

Կանոնադրության նախաբանում արձանագրված լրացման կամ կոմպլեմենտարության սկզբունքը հաջորդաբար արտացոլվել է Միջազգային քրեական դատարանի կարգավիճակին վերաբերող՝ Կանոնադրության 1-ին հոդվածում, սակայն դրա իրավական բովանդակությունը մանրամասնված է Կանոնադրության 17-րդ հոդվածում, համաձայն որի՝ Միջազգային քրեական դատարանն իրավասու չէ քննության ընդունել այնպիսի գործ՝

ա) որի կապակցությամբ իրականացվում է քննություն կամ հարուցված է քրեական հետապնդում այն պետության կողմից, որն իրավազորություն ունի տվյալ գործի նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ պետությունը չի ցանկանում կամ անկարող է պատշաճ կերպով իրականացնել քննությունը կամ քրեական հետապնդումը, կամ

բ) որի կապակցությամբ քննություն է իրականացվել այն պետության կողմից, որն իրավազորություն ունի տվյալ գործի նկատմամբ, և այդ պետությունը որոշել է



տվյալ անձի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնել, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ որոշումն արդյունք է պետության՝ պատշաճ կերպով քրեական հետապնդում իրականացնելու ցանկության բացակայության կամ անկարողության, կամ

գ) որով համապատասխան անձի նկատմամբ արդեն իսկ անցկացվել է դատաքննություն այն արարքի համար, որը տվյալ բողոքի առարկան է, և Միջազգային քրեական դատարանի կողմից գործի քննությունը, 20-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, չի թույլատրվում, կամ

դ) որը բավարար ծանրության աստիճանի չէ, որպեսզի հիմնավորված լինեն Միջազգային քրեական դատարանի հետագա գործողությունները:

Կանոնադրության 17-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը նկարագրում են դրանով նախատեսված՝ Միջազգային քրեական դատարանին ընդդատյա հանցագործությունների արդյունավետ քննության հարցում համապատասխան պետության կամքի կամ կարողության բացակայության մասին եզրահանգման համար անհրաժեշտ որոշիչ հանգամանքները:

Կանոնադրության նախաբանի 10-րդ մասի և 1-ին հոդվածի՝ 17-րդ հոդվածի դրույթների հետ համակցված վերլուծությամբ ակնհայտ է դառնում, որ Կանոնադրության՝ կոնկրետ գործի ընդունելիությանը վերաբերող կանոնները Միջազգային քրեական դատարանի իրավազորության իրականացման հնարավորությունը սահմանափակում են ազգային քրեական իրավազորության արդյունավետ իրականացմամբ: Կանոնադրության հիշյալ դրույթների և Կանոնադրության նախաբանի 6-րդ մասի (համաձայն որի՝ «յուրաքանչյուր պետության պարտականությունն է իրականացնել իր քրեական իրավազորությունը միջազգային հանցագործությունների համար պատասխանատու անձանց նկատմամբ») համակցված վերլուծությունից բխում է, որ Կանոնադրության նպատակների համար Միջազգային քրեական դատարանի իրավազորությունը չունի առաջնայնություն ազգային իրավազորության նկատմամբ և չի նախատեսվել դրա համար, այլ գալիս բացառապես որպես լրացնող իրավազորություն՝ ազգային



քրեական իրավագործությունը արդյունավետորեն իրականացնելու գործում կամքի կամ կարողության բացակայության դեպքում:

6.2. Կանոնադրության նախաբանի 10-րդ մասով և 1-ին հոդվածով ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-502 որոշումը հիմնված է բացառապես 1995 թվականի Սահմանադրության 91 և 92-րդ հոդվածներով Միջազգային քրեական դատարանը՝ որպես Հայաստանի Հանրապետությունում արդարադատություն իրականացնող մարմին չնախատեսելու, ինչպես նաև միջազգային պայմանագրով Հայաստանի Հանրապետության քրեական իրավագործության համակարգը միջազգային դատական մարմնով լրացնելու հնարավորության բացակայության մասին եզրահանգումների վրա (ՍԴՈ-502 որոշում, 14-րդ կետ):

Սահմանադրական դատարանի ՍԴՈ-502 որոշմամբ նշված՝ Կանոնադրության նախաբանի 10-րդ մասով և 1-ին հոդվածով ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը հակասելու հանգամանքի առնչությամբ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության սուուգումն սկսել Սահմանադրության և Կանոնադրության ընդունման նպատակներին և դրանցով պաշտպանվող ընդհանուր արժեքներին անդրադարձով:

Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը հիշեցնում է, որ սահմանադրական որևէ նորմի մեկնաբանություն շեղվում է իր արժեքանական հունից, եթե այն համատեղելի չէ Սահմանադրության նախաբանում և անփոփոխելի մյուս դրույթներում հռչակված նպատակների, արժեքների և սկզբունքների հետ: 2021 թվականի ապրիլի 29-ի ՍԴՈ-1590 որոշմամբ Սահմանադրական դատարանն արդեն իսկ արձանագրել է, որ «(...) Սահմանադրության անփոփոխելի դրույթներն այն հիմնարար և կենտրոնական առանցքն են, որի հիման վրա և շուրջ ձևավորվել և զարգանալու է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը»՝ միաժամանակ Սահմանադրության անփոփոխելի դրույթների շարքին դասելով

Սահմանադրության նախաբանը:



Սահմանադրության նախաբանում՝ Հայ ժողովուրդը, ի շարս այլ նպատակների և սկզբունքների, Սահմանադրությունն ընդունել է նաև՝ «հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին»: Սահմանադրության նախաբանում այս հավաստիքի արձանագրումը «համամարդկային արժեքներ» սահմանադրական եզրը դարձնում է Սահմանադրության նորմերի նպատակային մեկնաբանման համար կիրառելի առաջնային ուղենիշ:

6.3. Կանոնադրությունը Միջազգային քրեական դատարանի գործունեության իրավական հիմքն է, որն ընդունվել է՝ ճանաչելով և հաշվի առնելով այն իրողությունը, որ Կանոնադրությունն ընդունելուն նախորդած հարյուրամյակի ընթացքում «միլիոնավոր երեխաներ, կանայք ու տղամարդիկ զոհ են դարձել մարդկության խիղճը խորապես ցնցող աներևակայելի ոճրագործությունների» (Կանոնադրություն, նախաբան, 2-րդ մաս), և որ «նման ծանրագույն հանցագործություններն սպառնում են համընդհանուր խաղաղությանը, անվտանգությանն ու բարեկեցությանը» (Կանոնադրություն, նախաբան, 3-րդ մաս):

Կանոնադրության նախաբանից բխում է, որ այն ընդունող պետությունները հաստատակամ դիրքորոշում են ունեցել առ այն, որ «միջազգային ողջ հանրության մտահոգությունը հարուցող առավել ծանր հանցագործություններն անպատիժ չպետք է մնան, և որ դրանց արդյունավետ քրեական հետապնդումը պետք է ապահովվի ինչպես ազգային մակարդակով միջոցներ ձեռնարկելով, այնպես էլ միջազգային համագործակցությունն ընդլայնելով» (Կանոնադրություն, նախաբան, 4-րդ մաս): Կանոնադրության ընդունման համար շարժիչ ուժ է եղել նրանց վճռականությունը՝ «վերջ դնելու նման հանցագործություններ կատարած անձանց անպատժելիությանը և դրանով իսկ նպաստելու այդպիսի հանցագործությունների կանխարգելմանը» (Կանոնադրություն, նախաբան, 5-րդ մաս):

Վերը նշված նպատակների իրագործման համար և ի բարօրություն ներկա ու ապագա սերունդների՝ հիմնադրվել է անկախ Միջազգային քրեական դատարանը, որն օժտված է միջազգային ողջ հանրության մտահոգությունը հարուցող առավել



ծանր հանցագործությունների նկատմամբ իրավազորությամբ (Կանոնադրություն, նախաբան, 9-րդ մաս):

6.4. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Կանոնադրության նախաբանում ամրագրված և վերը հիշատակված արժեքները, մասնավորապես՝ համընդհանուր խաղաղությունը, անվտանգությունն ու բարեկեցությունը նաև Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ (Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրություն, նախաբանի 1-2-րդ մասեր, 1-ին հոդված, մասեր 1 և 3) և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, նախաբան, մաս 1) ամրագրված և պահպանվող համամարդկային արժեքներ են և անառարկելիորեն կազմում են Սահմանադրության նախաբանում արձանագրված «համամարդկային արժեքների» առանցքը: Հետևաբար՝ դրանց պաշտպանությանը և պահպանությանն ուղղված՝ Կանոնադրությամբ արձանագրված նպատակների իրագործման՝ Հայաստանի Հանրապետության հանձնառությունը լիովին համահունչ է Սահմանադրության նախաբանում Հայ ժողովրդի՝ համամարդկային արժեքներին հավատարմության հավաստիքին:

6.5. Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ Սահմանադրության նախաբանում Հայ ժողովրդի համամարդկային արժեքներին հավատարմության հավաստիքը՝ հատկապես համընդհանուր խաղաղությանն սպառնացող ծանրագույն հանցագործությունների և դրանց անպատժելիության դեմ պայքարին վերաբերելի մասով՝ որպես Սահմանադրության դրույթների մեկնաբանման արժեքանական ուղենիշ դիտարկելու սահմանադրական հրամայականի հիմքում ընկած է նաև այն պատմական, էթիկական և քաղաքակրթական չափորոշիչը, որ Կանոնադրության նախաբանում շարադրված ոճրագործությունների և դրանց անպատժելիության դեմ պայքարի կարևորությունն արդեն իսկ արձանագրված է եղել Հայաստանի անկախության գործընթացում՝ հայոց ցեղասպանության միջազգային հանցանքը սատարելու մասին հռչակմամբ (Հայաստանի անկախության մասին



հոչակագիր, կետ 11): Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը սատարելու մասին դրույթը Հայաստանի անկախության հոչակագրում ունի ոչ միայն պատմական իրողության հետադարձորեն ճանաչման, այլև առավել ևս ապագայում նման ծանրագույն հանցագործությունների և դրանց անպատժելիության դեմ պայքարի միջոցով համընդհանուր խաղաղության և անվտանգության պաշտպանության միջազգային ջանքերին մասնակցության քաղաքակրթական բնույթի պարտավորության նշանակություն:

Հետևաբար՝ Սահմանադրական դատարանը, քննելով Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը, դրանով նախատեսված միջազգային քրեական արդարադատության համակարգի բաղադրիչների, մասնավորապես՝ Միջազգային քրեական դատարանի իրավագործության լրացնող կամ կոմպլեմենտար բնույթի սահմանադրականության ստուգումն իրականացնելու է նաև սույն կետում նշված՝ Հայ ժողովրդի՝ որպես Հայաստանի Հանրապետության Սահմանադրության անփոփոխելի դրույթների հեղինակի քաղաքակրթական հանձնառության լույսի ներքո:

6.6. Կանոնադրության 5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ Միջազգային քրեական դատարանին ընդդատյա հանցագործությունների ցանկը ներառում է ցեղասպանությունը, մարդկության դեմ ուղղված, պատերազմական և ագրեսիայի հանցագործությունները:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» 1948 թվականի դեկտեմբերի 9-ի կոնվենցիային Հայաստանի Հանրապետությունը միացել է դեռևս մինչև Սահմանադրության ուժի մեջ մտնելը (1991 թվականի դեկտեմբերի 10-ին՝ Գերագույն Խորհրդի N Ն-0467-1 որոշմամբ): Սույն կոնվենցիայով, որն ընդունվել էր՝ «(...) հաշվի առնելով, որ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեան իր 1946թ. դեկտեմբերի 11-ի 96 (1) բանաձևում հայտարարել է, որ միջազգային իրավունքի համաձայն ցեղասպանությունը հանցագործություն է և պատժելի է Միավորված ազգերի կազմակերպության ոգուն ու նպատակներին, և



որ քաղաքակիրթ աշխարհը դատապարտում է այն, ընդունելով, որ պատմության բոլոր ժամանակաշրջաններում ցեղասպանությունը մեծ կորուստներ է պատճառել մարդկությանը, և համոզված լինելով, որ մարդկությունն այդ նողկալի արհավիրքից ազատելու համար անհրաժեշտ է միջազգային համագործակցություն» («Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» 1948 թվականի դեկտեմբերի 9-ի կոնվենցիա, նախաբան), Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է ցեղասպանությունը կանխարգելելու և դրա կատարողներին պատժելու պարտավորություն («Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» 1948 թվականի դեկտեմբերի 9-ի կոնվենցիա, հոդված 1):

Բացի դրանից, Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ Հայաստանի Հանրապետությունը հետևողականորեն աջակցել է միջազգային հանրության մտահոգությունը հարուցող այլ հանցագործությունների դեմ պայքարին՝ միանալով այդ կապակցությամբ միջազգային համագործակցության ջանքերին վերաբերող մի շարք միջազգային պայմանագրերի, մասնավորապես (սակայն չսահմանափակվելով միայն)՝

ա) «Ռազմական հանցագործությունների նկատմամբ և մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» ժնևի 1968 թվականի նոյեմբերի 26-ի կոնվենցիային (Հայաստանի Հանրապետությունը միացել է 1993 թվականի մարտի 31-ին՝ Գերագույն խորհրդի Հ.Ն-0788-1 որոշմամբ),

բ) «Բռնազաղթված անձանց, ազգային փոքրամասնությունների և ժողովուրդների իրավունքների վերականգնման հետ կապված հարցերի մասին» համաձայնագրին (Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի հոկտեմբերի 19-ից), ինչպես նաև վերջինիս կից արձանագրությանը՝ ստորագրված 2003 թվականի մայիսի 30-ին, վավերացվել է 2004 թվականի ապրիլի 27-ին՝ Ազգային ժողովի Ն-093-3 որոշմամբ (ՍԴՈ-474)),

գ) 1987 թվականի նոյեմբերի 26-ին Ստրասբուրգում ստորագրված՝ «Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող



վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին» եվրոպական կոնվենցիային (Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2001 թվականի նոյեմբերի 7-ին՝ Ազգային ժողովի Ն-216-2 որոշմամբ (ՍԴՈ-332), թիվ 1 արձանագրությունը՝ 2002 թվականի մայիսի 15-ին՝ Ազգային ժողովի Ն-280-2 որոշմամբ (ՍԴՈ-355), թիվ 2 արձանագրությունը՝ 2002 թվականի մայիսի 15-ին՝ Ազգային ժողովի Ն-281-2 որոշմամբ (ՍԴՈ-354), կամընտիր արձանագրությունը՝ 2006 թվականի մայիսի 31-ին Ազգային ժողովի Ն-282-3 որոշմամբ (ՍԴՈ-618)),

դ) «Ապարտեիդի հանցագործության կանխման և դրա համար պատժի մասին» ժնևի 1973 թվականի միջազգային կոնվենցիային (Հայաստանի Հանրապետությունը միացել է 1993 թվականի մարտի 31-ին՝ Գերագույն էսորիդի Հ.Ն-0786-Վ որոշմամբ),

ե) 1925 թվականի հունիսի 17-ին ժնևում ստորագրված՝ «Ռազմական գործողությունների ժամանակ հեղձուցիչ, թունավորող կամ այլ գազերի օգտագործման և մանրէաբանական պատերազմի միջոցների արգելման մասին» արձանագրությանը (Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 2017 թվականի հոկտեմբերի 18-ին՝ ՀՕ-127-Ն օրենքով (ՍԴՈ-1345)):

6.7. Արձանագրելով Սահմանադրության և Կանոնադրության հիմքում ընկած արժեքանական համապատասխանությունը՝ Սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել, թե որքանով է Կանոնադրությամբ Միջազգային քրեական դատարանի իրավագրության իրականացման հիմքում ընկած լրացման կամ կոմպլեմենտարության սկզբունքը համատեղելի Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունը միայն Սահմանադրությամբ նախատեսված արդարադատության համակարգի կողմից իրականացվելու՝ Սահմանադրությամբ ամրագրված բացառիկության սկզբունքի հետ:

6.8. Սահմանադրության 162-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իսկ 163-րդ հոդվածի



1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում են Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը և օրենքով նախատեսված դեպքերում ստեղծված մասնագիտացված դատարանները:

Կանոնադրության 17-րդ հոդվածի համաձայն՝ Միջազգային քրեական դատարանի կողմից որևէ գործ, հաշվի առնելով Կանոնադրության նախաբանի 10-րդ մասը և 1-ին հոդվածը, չի կարող քննության ընդունվել, եթե տվյալ գործի նկատմամբ իրավազորություն ունեցող պետությունն իրականացրել կամ իրականացնում է իր իրավազորությունը: Այս ընդհանուր կանոնից բացառություններ են այն դեպքերը, երբ տվյալ գործի նկատմամբ իրավազորություն ունեցող պետությունը չի ցանկանում կամ չի կարող իրականացնել պատշաճ քննություն և հետապնդում (Կանոնադրություն, հոդված 17, 1-ին մաս, կետեր «ա» և «բ»):

Այսինքն՝ Կանոնադրության 17-րդ հոդվածը «Դատարանը վարույթի համար գործի անընդունելիության մասին որոշում է կայացնում» (նույն հոդվածի 1-ին մաս) իմպերատիվ կանոնի ուժով ուղղակիորեն սահմանափակում է Միջազգային քրեական դատարանի իրավազորությունը կոնկրետ գործի նկատմամբ պետության ազգային իրավազորության իրականացման հիմքով՝ Միջազգային քրեական դատարանի իրավազորության իրագործումը հնարավոր համարելով բացառապես ազգային իրավազորության արդյունավետ իրականացումը ձախողվելու (անկարողության կամ ցանկության բացակայության) դեպքերում: Այսպիսով՝ Միջազգային քրեական դատարանի կողմից իր իրավազորության իրականացումը չի փոխարինում ազգային իրավազորության համակարգերին և չի միջամտում ազգային իրավազորության շրջանակին, այլ միայն լրացնում է նրանց այնքանով, որքանով նրանք իրենց հետապնդած խնդրում ձախողում են այն:



6.9. Սահմանադրական դատարանը, նկատի ունենալով սույն որոշման 6.2-6.5-րդ կետերում նկարագրված՝ Սահմանադրությամբ և Կանոնադրությամբ ամրագրված հիմնարար նպատակների և արժեքների կարևորությունը և դրանց համընկնելը՝ միջազգային ծանրագույն հանցագործությունների հետապնդման միջոցով համընդհանուր խաղաղություն և բարօրություն ապահովելու մտադրությանը, արձանագրում է, որ Սահմանադրությամբ նախատեսված արդարադատության համակարգի, մասնավորապես՝ քրեական արդարադատության համակարգի գոյությունը, դրա կողմից Հայաստանի Հանրապետության քրեական իրավազորության իրականացման համար նախատեսված պայմանների և կարգավորումների ամբողջությունը, ինչպես նաև դրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական իրավազորությունն իրականացնելու հարցում բացառիկության պահանջը չեն կարող մեկնաբանվել այդպիսին ձևավորելու և սահմանելու՝ սահմանադրի նպատակներից անկախ: Սահմանադրությամբ հիմնված և երաշխավորված՝ Հայաստանի Հանրապետության քրեական իրավազորության համակարգը կոչված է ապահովելու, ի թիվս Սահմանադրությամբ ամրագրված այլ արժեքների, նաև Սահմանադրության նախաբանի իմաստով «համամարդկային արժեքների» պաշտպանությունը, որն առաջնահերթությամբ սահմանադրական հրամայական լինելուց բացի՝ նաև *jus cogens* նորմերով պարտավորություն է ցանկացած պետության համար:

Հետևաբար՝ միջազգային հանրության մտահոգությունը հարուցող ծանրագույն հանցագործությունների, ինչպիսիք են Կանոնադրության 5-8-րդ հոդվածներում նշված ցեղասպանությունը, մարդկության դեմ և պատերազմական հանցագործությունները, արդյունավետ քննելու և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու միջոցով համընդհանուր խաղաղության և բարօրության պաշտպանությունը ապահովելու՝ Հայաստանի Հանրապետության քրեական իրավազորության համակարգի ձախողումը որևէ պատճառով՝ անկարողության կամ ցանկության բացակայության, իր էությամբ հակասահմանադրական իրավիճակ է, և այն սահմանադրական հուն վերադարձնելուն միտված լրացնող իրավազորության



իրականացումը Սահմանադրության նախաբանում արձանագրված նպատակներին համահունչ նպատակներ հետապնդող մարմնի՝ Միջազգային քրեական դատարանի կողմից չի կարող գնահատվել որպես Հայաստանի Հանրապետության քրեական ինքնիշխան իրավազորությանը հակասահմանադրական միջամտություն:

Կանոնադրության նախաբանի 10-րդ մասի, 1-ին և 17-րդ հոդվածների համակցված վերլուծությունից բխում է, որ Միջազգային քրեական դատարանի իրավազորությունն ազգային իրավազորությունը լրացնում է այնքանով, որքանով վերջինս ի վիճակի չէ կամ ցանկություն չունի իրագործել Կանոնադրությամբ ամրագրված նպատակները, որոնք, ինչպես արդեն Սահմանադրական դատարանն արձանագրել է սույն որոշման 6.2-6.4-րդ կետերում, համընկնում են, մի կողմից՝ համամարդկային արժեքներին, որոնց իր հավատարմությունն է հավաստել Հայ ժողովուրդը՝ Սահմանադրությունն ընդունելիս, մյուս կողմից՝ արդեն իսկ հետապնդվում են *jus cogens* նորմերով:

Շեղանակաբար՝ Սահմանադրության նախաբանի լույսի ներքո Սահմանադրության 162-րդ հոդվածի 1-ին մասի և 163-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների մեկնաբանությունը՝ որպես Սահմանադրությամբ նախատեսված քրեական իրավազորության ազգային համակարգի նկարագրություն, չի բացառում միջազգային՝ Կանոնադրությամբ նախատեսված սահմաններով և հիմքերով Հայաստանի Հանրապետության քրեական ինքնիշխան իրավազորությունը Միջազգային քրեական դատարանի համակարգով լրացնելու հնարավորությունը:

Սահմանադրական նորմերի հակառակ մեկնաբանությունը հանգեցնում է Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության նպատակի և Սահմանադրության նախաբանում Հայ ժողովրդի կողմից հռչակված «համամարդկային արժեքներին» հավատարմության հավաստիքի միջև անթույլատրելի հակասության, ինչը ոչ միայն սահմանադրական արժեքանության սխալ ընկալում է, այլ նաև ուղղակիորեն հակասում է Հայաստանի Հանրապետության իրավազորության բացառիկության նպատակին:

6.10. Շեղանակաբար՝ Սահմանադրական դատարանը՝



ա) հաշվի առնելով Սահմանադրությամբ և Կանոնադրությամբ հետապնդվող նպատակների և դրանց հիմքում ընկած արժեքանության համապատասխանությունը,

բ) նկատի ունենալով, որ Կանոնադրության նախաբանի 10-րդ մասով և 1-ին հոդվածով նախատեսված և 17-րդ հոդվածով մանրամասնված՝ Միջազգային քրեական դատարանի իրավազորության հիմքում ընկած լրացման կամ կոմպլեմենտարության սկզբունքի էությունը հարգանքն է Կանոնադրության կողմ հանդիսացող պետության քրեական իրավազորության առաջնայնության նկատմամբ, և որ Միջազգային քրեական դատարանի իրավազորությունը ծագում է միայն տվյալ պետության քրեական իրավազորության համակարգի՝ իր նպատակը հետապնդելիս ձախողվելու դեպքում,

գ) ընդգծելով, որ Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրի՝ Հայ ժողովրդի կողմից «համամարդկային արժեքներին» հավատարմության հավաստիքն անառարկելիորեն ներառում է միջազգային հանրության մտահոգությունը հարուցող և համընդհանուր խաղաղության ու բարօրության համար սպառնալիք հանդիսացող ծանրագույն հանցագործությունների և դրանց անպատժելիության դեմ պայքարի միջոցով համընդհանուր խաղաղության և անվտանգության պաշտպանությանն ուղղված միջազգային համագործակցության իր քաղաքակրթական հանձնառությունը,

գտնում է, որ Կանոնադրության նախաբանի 10-րդ մասում և 1-ին հոդվածում ամրագրված պարտավորությունները սույն որոշմամբ բերված պատճառաբանությամբ համապատասխանում են Սահմանադրությանը:

7. Կանոնադրության 105-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության մասին

Սահմանադրական դատարանի կողմից Կանոնադրության 105-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցին սույն կետով առանձին անդրադարձն այնպես, ինչպես սույն



որոշման 6-րդ կետում Կանոնադրության նախաբանի 10-րդ մասի և 1-ին հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի դեպքում, նույնպես պայմանավորված է Կանոնադրության 105-րդ հոդվածի դրույթների՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ Սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-502 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման պայմաններում սույն գործով կայացվելիք եզրահանգման առնչությամբ հնարավոր անորոշությունը բացառելու անհրաժեշտությամբ:

7.1. Կանոնադրության 105-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունների՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ Սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-502 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման հիմքում ընկած է այն դատողությունը, ըստ որի՝ «(...) երբ Կանոնադրության 5 հոդվածում նախատեսված հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ քրեական իրավագործություն իրականացնում են ՀՀ ներպետական դատարանները, վերջիններիս կողմից ազատագրվման դատապարտված անձինք կարող են օգտվել ներում հայցելու հնարավորությունից և համաներման միջոցով պատժի կրումից ազատվելու կամ ազատագրվման ժամկետի կրճատման հնարավորությունից: Մինչդեռ, նույն հանցագործությունների համար Դատարանի՝ որպես ներպետական քրեական իրավագործության համակարգը լրացնող մարմնի, կողմից դատապարտված՝ ՀՀ ընդհանուր իրավագործության ներքո գտնվող անձինք Կանոնադրության 105 հոդվածի պահանջներին համապատասխան զրկվում են ՀՀ Սահմանադրության 40 հոդվածով նախատեսված ներման իրավունքից, ինչպես նաև 81 հոդվածով ամրագրված համաներման հնարավորությունից»:

Այս դատողության հիման վրա 1995 թվականի Սահմանադրության 4-րդ հոդվածը մեկնաբանելու և կիրառելու արդյունքում Սահմանադրական դատարանը Կանոնադրության 105-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը հակասող՝ որպես Սահմանադրությամբ չնախատեսված՝ փողոցի իրավունքների սահմանափակման այնպիսի պարտավորություններ, որոնք



նվագ բարենպաստ վիճակ կստեղծեին Հայաստանի Հանրապետության իրավազորության ներքո գտնվող այն անձանց համար, որոնք ազատագրկման ձևով պատիժ կկրեին:

Այս առնչությամբ, մինչ Սահմանադրական դատարանի կողմից 1995 թվականի Սահմանադրության 40-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 17-րդ կետի, 81-րդ հոդվածի 1-ին կետի նորմերով կարգավորվող հարաբերությունների իրավակարգավորմանը վերաբերող գործող սահմանադրական նորմերի վերլուծությունը և այդ նորմերին Կանոնադրության 105-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունների համապատասխանության հարցը որոշելը՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ Կանոնադրության 105-րդ հոդվածով նախատեսված պարտավորության բնույթին և դրա ծագման պայմաններին՝ պարզելու նպատակով, թե արդյոք Կանոնադրության 105-րդ հոդվածով նախատեսվում են Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով Կանոնադրության մեջ «ամրագրված պարտավորություններ»:

7.2. Կանոնադրության «Կատարումը» վերտառությամբ 10-րդ մասի (բաժնի) դրույթները կանոնակարգում են Միջազգային քրեական դատարանի դատավճռի կատարման հետ կապված, մասնավորապես՝ ազատագրկման ձևով պատիժն ի կատար ածող պետության կարգավիճակի ստանձնման (Կանոնադրություն, 103-րդ հոդված) և այդպիսի դատավճռի կատարման հարաբերությունները (Կանոնադրություն, 105-րդ հոդված):

Կանոնադրության 105-րդ հոդվածի համաձայն՝ Կանոնադրության 103-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված՝ պատժի կրման նպատակով դատապարտյալին ընդունելու առնչությամբ պետության առաջադրած և Միջազգային քրեական դատարանի կողմից ընդունված պայմանների շրջանակում ազատագրկման ձևով պատժի նշանակման մասին դատավճիռը պարտադիր է Կանոնադրության կողմ հանդիսացող դատապարտյալին ընդունող պետության համար, որն այդ դատավճիռը փոփոխելու իրավասություն չունի:



Կանոնադրության 103-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ ազատագրկման ձևով պատիժը Միջազգային քրեական դատարանի կողմից դատապարտված դատապարտյալը կրում է Միջազգային քրեական դատարանի նշանակած այն պետությունում, որը Միջազգային քրեական դատարանին նախապես հայտնել է դատապարտված անձանց ընդունելու իր պատրաստակամության մասին: Նույն հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն՝ դատապարտյալներին ընդունելու իր պատրաստակամությունը հայտնելիս պետությունը կարող է Միջազգային քրեական դատարանի համաձայնությամբ և Կանոնադրության 10-րդ մասին (բաժնին) համապատասխան, ներկայացնել դատապարտյալի ընդունման իր պայմանները: Ավելին, Կանոնադրության 103-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի համաձայն՝ կոնկրետ գործով Միջազգային քրեական դատարանի կողմից որպես դատավճռի կատարման պետություն նշանակվելուց հետո տվյալ դատապարտյալի մասով դատավճիռն ի կատար ածելու՝ 105-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունը պետությունը ստանձնում է՝ միայն նշանակման վերաբերյալ իր համաձայնության մասին Միջազգային քրեական դատարանին տեղեկացնելով:

Իր հերթին, Միջազգային քրեական դատարանի՝ «Ընթացակարգի և ապացուցման կանոնների» 200-րդ կանոնի 2-րդ մասի համաձայն՝ Միջազգային քրեական դատարանի նախագահությունը որևէ պետության չի կարող ընդգրկել Կանոնադրության 103-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ Միջազգային քրեական դատարանի դատավճռով դատապարտված անձի պատժի կրումն ապահովելու պատրաստակամություն հայտնած պետությունների ցանկում, եթե չի ընդունում դատապարտյալի պատժի ի կատար ածման մասին այդ պետության կողմից առաջադրված պայմանները: Նույն կանոնի 5-րդ մասի համաձայն՝ իր կողմից դատապարտված բանտարկյալների ընդունման կարգը սահմանելու նպատակով Միջազգային քրեական դատարանը պետությունների հետ կարող է



երկկողմ պայմանագրեր կնքել, ինչը Միջազգային քրեական դատարանի կողմից ձևավորած պրակտիկա է¹:

7.3. Հետևաբար՝ Կանոնադրության՝ «Պատժի կատարումը» վերտառությամբ 105-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունը, այն է՝ Կանոնադրության

¹ Տե՛ս, մասնավորապես, Միջազգային քրեական դատարանի և պատիժներն ի կատար ածող համապատասխան պետության միջև միջազգային պայմանագրեր կնքելու պրակտիկան, օրինակ՝

(1) Ավստրիայի Դաշնային Հանրապետության հետ 2005 թվականի հոկտեմբերի 27-ին կնքված ICC-PRES/01-01-05 միջազգային պայմանագիրը (տե՛ս https://www.icc-cpi.int/sites/default/files/NR/rdonlyres/975246DC-383B-42EF-A78B-D0773BEB20A4/140155/ICCPRES010105_en.pdf, հղմանը վերջին մուտքը՝ 2023 թվականի մարտի 24),

(2) Սլովենիայի Հանրապետության հետ 2018 թվականի դեկտեմբերի 7-ին կնքված ICC-PRES/28-01-22 միջազգային պայմանագիրը (տե՛ս <https://www.icc-cpi.int/sites/default/files/2022-05/20220401-Agreement-on-the-Enforcement-of-Sentences-ICC-Slovenia-ENG.pdf>, հղմանը վերջին մուտքը՝ 2023 թվականի մարտի 24),

(3) Կոլումբիայի Հանրապետության հետ 2011 թվականի մայիսի 17-ին կնքված ICC-PRES/29-02-22 միջազգային պայմանագիրը (տե՛ս <https://www.icc-cpi.int/sites/default/files/2022-10/Agreement-Republic-Colombia-ICC-Enforcement-of-Sentences-ENG.pdf>, հղմանը վերջին մուտքը՝ 2023 թվականի մարտի 24),

(4) Վրաստանի հետ 2019 թվականի հունվարի 24-ին կնքված ICC-PRES/27-01-19 միջազգային պայմանագիրը (տե՛ս https://www.icc-cpi.int/sites/default/files/itemsDocuments/190124-0j-sa-Georgia_ENG.pdf, հղմանը վերջին մուտքը՝ 2023 թվականի մարտի 24),

(5) Ֆինլանդիայի Հանրապետության հետ 2010 թվականի հունիսի 1-ին կնքված ICC-PRES/07-01-11 միջազգային պայմանագիրը (տե՛ս <https://www.icc-cpi.int/sites/default/files/NR/rdonlyres/F21AB53F-7257-45C8-A5EB-42B17D86B65B/283222/SentencingAgreementwithFinland.pdf>, հղմանը վերջին մուտքը՝ 2023 թվականի մարտի 24),

(6) Դանիայի Թագավորության հետ 2010 թվականի հունիսի 1-ին կնքված ICC-PRES/12-02-12 միջազգային պայմանագիրը (տե՛ս <https://www.icc-cpi.int/sites/default/files/NR/rdonlyres/D9462230-4163-4747-BC7C-CB0141C5004B/284720/SentencingagreementwithDenmarkEng.pdf>, հղմանը վերջին մուտքը՝ 2023 թվականի մարտի 24),

(7) Բելգիայի Թագավորության հետ 2014 թվականի դեկտեմբերի 8-ին կնքված ICC-PRES/16-03-14 միջազգային պայմանագիրը (տե՛ս <https://www.icc-cpi.int/sites/default/files/iccdocs/oj/ICC-PRES-16-03-14-Eng.pdf>, հղմանը վերջին մուտքը՝ 2023 թվականի մարտի 24),

(8) Մալիի Հանրապետության հետ 2012 թվականի հունվարի 13-ին կնքված ICC-PRES/11-01-12 միջազգային պայմանագիրը (տե՛ս <https://www.icc-cpi.int/sites/default/files/2022-10/Agreement-Republic-Mali-ICC-Enforcement-of-Sentences-ENG.pdf>, հղմանը վերջին մուտքը՝ 2023 թվականի մարտի 24),

(9) Նորվեգիայի Թագավորության հետ 2016 թվականի հուլիսի 7-ին կնքված ICC-PRES/18-02-16 միջազգային պայմանագիրը (տե՛ս https://www.icc-cpi.int/sites/default/files/iccdocs/oj/Agreement_on_the_enforcement_of_sentences_with_NorwayEng.pdf, հղմանը վերջին մուտքը՝ 2023 թվականի մարտի 24),

(10) Սերբիայի Հանրապետության հետ 2011 թվականի հունվարի 20-ին կնքված ICC-PRES/09-03-11 միջազգային պայմանագիրը (տե՛ս <https://www.icc-cpi.int/sites/default/files/NR/rdonlyres/FAFDAF32-B24C-429D-855B-9918D7CF43DE/283411/SentencingAgreementwithSerbia.pdf>, հղմանը վերջին մուտքը՝ 2023 թվականի մարտի 24),

(11) Շվեդիայի Թագավորության հետ 2017 թվականի ապրիլի 24-ին կնքված ICC-PRES/20-02-17 միջազգային պայմանագիրը (տե՛ս <https://www.icc-cpi.int/sites/default/files/itemsDocuments/170424-0j-sa-Sweden.pdf>, հղմանը վերջին մուտքը՝ 2023 թվականի մարտի 24),

(12) Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության հետ 2007 թվականի նոյեմբերի 8-ին կնքված ICC-PRES/04-01-07 միջազգային պայմանագիրը (տե՛ս <https://www.icc-cpi.int/sites/default/files/NR/rdonlyres/C540B3EF-F3FF-4AD0-93F5-DA85E96B1522/0/ICCPres040107ENG.pdf>, հղմանը վերջին մուտքը՝ 2023 թվականի մարտի 24),

(13) Արգենտինայի Հանրապետության հետ 2017 թվականի ապրիլի 18-ին կնքված ICC-PRES/19-01-17 պայմանագիրը (տե՛ս <https://www.icc-cpi.int/sites/default/files/itemsDocuments/170418-0j-sa-Argentina.pdf>, հղմանը վերջին մուտքը՝ 2023 թվականի մարտի 24):



103-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսված պայմանների շրջանակում ազատագրկման ձևով պատժի նշանակման վերաբերյալ դատավճռի վերջնականության և անփոփոխելիության ճանաչմամբ կատարելը տարածվում է միայն այն պետության նկատմամբ, որը՝

ա) պատրաստակամություն է հայտնել Միջազգային քրեական դատարանի դատավճիռն ի կատար ածելու նպատակով դատապարտված անձ ընդունելու մասին (Կանոնադրություն, 103-րդ հոդվածի 1-ին մաս, «ա» կետ, «Ընթացակարգի և ապացուցման կանոններ», 200-րդ կանոն, 1-2-րդ մասեր), և

բ) Միջազգային քրեական դատարանի հետ համաձայնեցրել է դատապարտված անձի պատիժն ի կատար ածելու պայմանները («Ընթացակարգի և ապացուցման կանոններ», 200-րդ կանոն, 5-րդ կետ), և

գ) համապատասխան դատավճռի առկայության դեպքում Միջազգային քրեական դատարանի նախագահության կողմից նշանակվել է որպես պատիժն ի կատար ածող պետություն (Կանոնադրություն, 103-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասեր), և

դ) Միջազգային քրեական դատարանի նախագահության կողմից որպես պատիժն ի կատար ածող պետություն նշանակվելուն համաձայնություն է տվել (Կանոնադրություն, 103-րդ հոդվածի 1-ին մաս, «գ» կետ):

Այսինքն՝ Միջազգային քրեական դատարանի կողմից ազատագրկման դատապարտված անձի պատժի կրման առնչությամբ պետության՝ Կանոնադրության 105-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունն անմիջականորեն չի ծագում Կանոնադրության վավերացմամբ, այլ այն Կանոնադրության Կողմ հանդիսացող պետության կողմից կամընտրաբար ստանձնվող պարտավորություն է, որն ստանձնվում է վերը շարադրված «ա»-«դ» կետերում թվարկված բոլոր պայմանների առկայությամբ:

7.4. Սույն գործով ներկայացված դիմումի քննության և Կանոնադրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու՝ Սահմանադրական դատարանի լիազորությունը բխում է Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետից, համաձայն որի՝ Սահմանադրական



դատարանը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով սահմանված կարգով «մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը»:

Սահմանադրական դատարանի՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված լիազորությունից բխում է վավերացման ենթակա միջազգային պայմանագրով ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության՝ Սահմանադրական դատարանի կողմից նախնական պարտադիր ստուգման ընթացակարգը՝ հաշվի առնելով վավերացված միջազգային պայմանագրով նախատեսված իրավական նորմերի՝ Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն իրավական նորմերի աստիճանակարգության մեջ ունեցած դիրքը, որի ուժով՝ դրանց և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

7.5. Նկատի ունենալով սույն որոշման 7.3-րդ կետում նկարագրված հանգամանքներն ու ընթացակարգերը, անդրադառնալով Կառավարության դիրքորոշման մեջ ներկայացված՝ Կանոնադրության 105-րդ հոդվածով սահմանված պարտավորության՝ Սահմանադրության 70 և 117-րդ հոդվածներով նախատեսված նորմերին համապատասխանության վերաբերյալ փաստարկներին՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Կանոնադրության 105-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունը Կանոնադրության 103-րդ հոդվածի 1-ին մասով և «Ընթացակարգի և ապացուցման կանոնների» 200-րդ կանոնով նախատեսված ընթացակարգով ստանձնած լինելու դեպքում կարող է վերաբերել Սահմանադրության 70-րդ հոդվածով նախատեսված ներման խնդրանքի անհատական իրավունքին և Ազգային ժողովի՝ համաներման մասին օրենք ընդունելու՝ Սահմանադրության 117-րդ հոդվածով ամրագրված իրավասությանը:

Այդուհանդերձ, Կանոնադրության 105-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունը չի ծագում Կանոնադրության վավերացմամբ, այլ միայն վերը նկա-



րագրած ընթացակարգով Հայաստանի Հանրապետության կողմից դատապարտյալներին ընդունելու վերաբերյալ պատրաստականություն հայտնած պետությունների ցանկում ներառվելու նպատակով Միջազգային քրեական դատարանի հետ համապատասխան միջազգային պայմանագրով:

7.6. Կանոնադրության 105-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունների ծագման և բնույթի մասին սույն որոշման վերլուծությունները կիրառելով ստուգման ենթակա միջազգային պայմանագրով՝ Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի լուծման նպատակով Սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունում Կառավարության ներկայացուցչի՝ Սահմանադրական դատարանի հարցմանն ի պատասխան 2023 թվականի մարտի 17-ի գրությամբ ներկայացրած պաշտոնական հավաստումն առ այն, որ Կառավարությունը չունի Կանոնադրության 103-րդ հոդվածով նախատեսված՝ Միջազգային քրեական դատարանի կողմից ազատազրկման դատապարտված անձանց՝ պատիժն ի կատար ածելու նպատակով ընդունելու մասին հայտարարություն անելու մտադրություն (սույն որոշման 3.2 կետ):

7.7. Հետևաբար՝ Կանոնադրության 105-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունները չեն կարող համարվել Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով միջազգային պայմանագրով «ամրագրված պարտավորություններ», քանի որ դրանք Հայաստանի Հանրապետության համար չեն ծագելու Կանոնադրության վավերացմամբ, այլ միայն նկարագրված ընթացակարգի արդյունքում կնքվող միջազգային պայմանագրով, որոնք սույն դիմումով քննության առարկա չեն:

8. Կանոնադրության 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Միջազգային քրեական դատարանի իրավազորությունը հետադարձորեն ճանաչելու մասին հայտարարությամբ ամրագրված պարտավորությունների մասով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հիշյալ հայտարարությունը չի պարունակում Կանոնադրությամբ նախատեսված պարտավորություններից տարբերվող որևէ



պարտավորություն: Ազգային ժողովին առաջարկվող այդ հայտարարության իրավական բովանդակությունը բացառապես վերաբերում է Կանոնադրության 6-8-րդ հոդվածներով նախատեսված՝ ցեղասպանության, մարդկության դեմ ուղղված և պատերազմական հանցագործությունների նկատմամբ Միջազգային քրեական դատարանի իրավազորությունը 2021 թվականի մայիսի 10-ի ժամը 00:00-ից ի վեր ճանաչելու արդյունքում՝ հիշյալ հանցագործությունների նկատմամբ Միջազգային քրեական դատարանի իրավազորության ճանաչմանը՝ նույն հայտարարությամբ նշված պահից:

Հետևաբար՝ վերահաստատելով սույն որոշման 5-6-րդ կետերում ներկայացված՝ Կանոնադրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանելու վերաբերյալ դիրքորոշումը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Կանոնադրության 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Միջազգային քրեական դատարանի իրավազորությունը հետադարձորեն ճանաչելու մասին հայտարարությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 169-րդ հոդվածի 3-րդ մասով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63 և 64-րդ հոդվածները, 74-րդ հոդվածի 1-5-րդ մասերը և 6-րդ մասի 1-ին կետը՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 1998 թվականի հուլիսի 17-ին ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունում և 1998 թվականի հուլիսի 17-ին ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Միջազգային քրեական դատարանի իրավազորությունը հետադարձորեն ճանաչելու մասին հայտարարությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:



2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ



Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

24 մարտի 2023 թվականի
ՍԴՈ-1680